МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ.Հ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **03.05.2024թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/49»

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2024 թվականի փետրվարի 29-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է լաբորատոր սարքերի և պարագաների ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/49» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «Профлаб ООО» ընկերության կողմից (հվհհ՝ 8624181592, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 4-րդ նիստի արձանագրության 6-րդ կետով Ընկերության կողմից ներկայացված հայտի փաթեթում արձանագրվել են մի շարք թերություններ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը Ընկերությանը տրվել է մեկ աշխատանքային օր ժամանակ՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով, սակայն սահմանված ժամանակահատվածում արձանագրված թերությունները չեն շտկվել, ուստի հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը վերջինիս հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն «մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը**, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ **<u>գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը</u>** և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ